Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան հիմնադրամ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ ՍԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՊԱՏՎԻ ՈՒ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Կատարող՝ Անուշ Իսոյան

Մանկապարտեզ՝ ՀՀ Արմավիրի մարզի Շենիկ համայնքի ՀՈԱԿ

ԵՐԵՎԱՆ- 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ 1 ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ և ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1.1.«ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՄԱԿ-Ի ԿՈՆՎԵՆՑԻԱՆ, ԸՆԴՀԱՆՈՒՐ

ԲՆՈՒԹԱԳԻՐԸ.....6

1.2. ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 8

ԳԼՈՒԽ 2 ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍ 12

ԵԶԱՐԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....19

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը:Հաշվի առնելով երեխաների տարիքային և զարգացման առանձնահատկությունները, նրանք առավել խոցելի են իրենց իրավունքների պաշտպանության տեսանկյունից, հետևաբար երեխաների իրավունքները պետք է լինեն առանձնահատուկ ուշադրության ներքո:Երեխաների իրավունքների ու ազատությունների,օրինական շահերի պաշտպանությունն ու ապահովումը մեր օրերում պետաիրավական

կարևորագույն հիմնահարցերից մեկն է: Երեխաները ցանկացած պետության և հասարակության ապագան են և նրանից,

թե որքանով են պաշտպանված նրանց իրավունքներն ու ազատությունները, արժանապատվությունը, կախված է նաև հասարակության ապագան: Ինչպես ցանկացած քաղաքակիրթ պետություն, որն իր առաջնահերթ գործառույթներից է համարում հասարակության անչափահաս անդամների պաշտպանությունը, Հայաստանի Հանրապետությունը ևս հոգատարություն է դրսևորում իր ապագա քաղաքացիների բարոյապես, ֆիզիկապես, մտավոր ճիշտ զարգացման ու դաստիարակության հանդեպ: Քաղաքական և սոցիալ-տնտեսական փոփոխություններն ուղիղ համեմատական են երեխաների կարգավիճակին:

1948 թվականին Միավորված ազգերի կազմակերպությունը Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում հռչակեց ու համաձայնեց, որ յուրաքանչյուր մարդ օժտված է հռչակագրում ամրագրված բոլոր իրավունքներով ու ազատություններով: Հռչակագրում ամրագրված իրավունքները վերաբերում են բոլոր մարդկանց, հետևաբար՝ նաև երեխաներին: Եվ ուրեմն՝ ինչո՞ւ ենք առանձնացնում երեխաներին և խոսում երեխաների իրավունքների մասին: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում ընդգծվում է, որ երեխաներն ունեն հատուկ հոգածության ու օժանդակության իրավունք (հոդված 25): Երեխաների համար առանձնահատուկ կերպով հոգ տանելու, նրանց աջակցելու ու պաշտպանելու անհրաժեշտությունը գիտակցվել էր նաև ավելի վաղ: 1924 թվականին Ազգերի լիգան ընդունել էր «Երեխայի իրավունքերի մասին» հռչակագիրը, որը հայտնի է որպես Ժնևի հռչակագիր: Այս հռչակագրով առաջին անգամ ճանաչվեց և հաստատվեց, որ երեխաների համար գոյություն ունեն հատուկ իրավունքներ: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի ընդունումից հետո ի հայտ եկան Ժնևի հռչակագրի բացերը, անհրաժեշտություն առաջացավ վերանայել հռչակագիրը և ընդլայնել

երեխաների իրավունքների շրջանակը: 1959 թվականի նոյեմբերի 20-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան ընդունեց «Երեխայի իրավունքների հռչակագիրը»: «Երեխայի իրավունքների հռչակագիրը» ևս ելնում է այն կանխադրույթից, որ երեխան ունի հատուկ պաշտպանության և հատուկ հոգատարության կարիք, և ընդգծում, որ մարդկությունը պարտավոր է տալ երեխաներին իր ունեցած լավագույնը: 1959 թվականի հռչակագիրը կազմված է 10 սկզբունքից, որոնցում ձևակերպված են երեխաների հատուկ պաշտպանության, խտրականությունից զերծ մնալու,անվան ու ազգության, կրթության, ժամանցի, աջակցող միջավայրի ու առողջության պահպանման, ներդաշնակ զարգացման, անտեսումից, դաժան վերաբերմունքից, շահագործումից, թրաֆիքինգից և աշխատանքի վատթարագույն ձևերից զերծ լինելու, հաշմանդամություն ունեցող երեխաների համար հատուկ կրթության, խնամքի ու աջակցության իրավունքները: Հաշվի առնելով երեխաների նկատմամբ առանձնահատուկ հոգածության անհրաժեշտությունը, կարևորելով երեխաների անհատականության լիակատար ու բազմակողմանի զարգացումը, ընդունելով, որ աշխարհի բոլոր երկրներում կան բացառիկ ծանր պայմաններում ապրող երեխաներ՝ Միավորված ազգերի կազմակերպությունը 1989 թվականի նոյեմբերի 20-ին ընդունում է «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիան: Այն ուժի մեջ մտավ 1990 թվականին: Կոնվենցիան միջազգայնորեն ճանաչված առաջին փաստաթուղթն է, որով ամրագրվում է երեխայի՝ որպես իրավունքի ինքնուրույն սուբյեկտի կարգավիճակը: 1924 և 1959 թվականների հռչակագրերը հիմնականում դիտարկում էին երեխային որպես «պաշտպանության սուբյեկտ», այլ ոչ թե անկախ և ինքնուրույն իրավատեր՝ իրավունքներ ունեցող անձ: Կոնվենցիայում ամրագրված իրավունքները հարմարեցված են երեխայի կարիքներին, հաշվի են առնում նրա խոցելիությունն ու զարգացման անհրաժեշտությունը և նախատեսում ենկատարելագործելով օրենսդրական ու չնայած այս ոլորտում մեծ թվով իրավական ակտերի առկայությանը, որոնք երաշխավորում են երեխայի իրավունքների ու ազատությունների, պատվի ու արժանապատվության, օրինական շահերի ապահովումը, այնուամենայնիվ նրանց իրական պաշտպանվածության աստիճանը չի կարելի գնահատել բավարար:

Վերոգրյալը հաշվի առնելով, ինչպես նաև ընդունելով ցանկացած պետության մշտական ուշադրությունը երեխայի իրավական կարգավիճակի հանդեպ, սույն ուսումնասիրության թեմայի արդիականությունն անվիճելի է:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել երեխաների իրավունքների և ազատությունների մեկնաբանությունը որպես իրավունքիհատուկ սուբյեկտի առանձնահատկությունները, երեխաների իրավունքների ուազատությունների ապահովման որակն ու պաշտպանության աստիճանըժամանակակից

պայմաններումԵրեխաների իրավունքներն ու ազատությունները, պետական մակարդակով նրանց ապահովման ու պաշտպանության հետ կապված հարցերը, չնայած դրանց տեսական ու գործնական նշանակությանը, հայկական իարվագիտության, ինչպես նաև մանկավարժության հատուկ հետազոտության առարկա չեն դարձել: Նշված հիմնահարցի միայն այս կամ այն կողմերը հետազոտվել են Է. Գրինի, Ա. Երիցյանի, Վ. Այվազյանի, Ա. Առաքելյանի, Գ. Հարությունյաի, Ա. Թոփուզյանի և այլոց աշխատություններում:

Առկա բոլոր ուսումնասիրությունները հիմնականում նվիրված են միայն երեխայի առանձին իրավունքների կամ հիմնահարցերի ուսումնասիրմանը, այլ ոչ թե նրանց ամբողջական լուսաբանմանը կամ էլ երեխայի իրավական կարգավիճակն ուսումնասիրել են որպես իրավունքի՝ մեծահասակ սուբյեկտների իրավական

Մեթոդաբանական հիմքը: Ուսումնասիրությունն իրականացնելիս կիրառվել են պատմական, վերլուծության, ընդհանրացման, մեկնաբանման մեթոդներ:

Հետազոտության ծավալն ու կառուցվածքը: Հետազոտությունը կազմում է 20 էջ: Բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացություններից, գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1 ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ և ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1.1.«ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՄԱԿ-Ի ԿՈՆՎԵՆՑԻԱՆ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1989թ.- նոյեմբերի 20-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան ընդունեց Երեխայի իրավունքների մասին հռչակագիրը, 1990թ.-ին նրա կողմից ընդունվեց նաև երեխաների իրավունքների պաշտպանության և զարգացման ապահովման մասին համաշխարհային հռչակագիրը, 2002թ.-ին Նյու Յորքում գումարվեց ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի նստաշրջանը, որը բացառապես նվիրված էր երեխաների հիմնախնդրին: Այն առաջ քաշեց «Կառուցենք երեխաների կյանքի համար պիտանի աշխարհ», «Կրթության և առողջապահության ոլորտներում ներդրումները կայուն զարգացման հիմք են», «Կրթությունը ներդրում է և ոչ թե սպասում», «Մանկության զարգացումից դեպի մարդկության զարգացում» և այլ կարգախոսներ: Այս ամենով հանդերձ ամրացվեց երեխայի՝ որպես հատուկ սուբյեկտի կարգավիճակը:

Երեխայի իրավունքների մասին հռչակագիրը ստեղծեց երեխայի նկատմամբ վերաբերմունքի նոր մոդել որը ելակետ հանդիսացավ ընտանիքում և հասարակության մեջ երեխայի կարգավիճակի փոփոխության համար: Այդ առնչությամբ հետաքրքրական է հետևյալ միտքը, որ ժամանակակից իրավագետներից և ոչ մեկն այլևս չի վիճարկում այն փաստը, որ երեխան հանդիսանում է իրավունքների ու ազատությունների ինքնուրույն կրող, հետևաբար՝ իրավունքի հատուկ սուբյեկտ :

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Քոֆի Անանը նշել է, որ մենք պետք է լսենք երեխաների ձայնը և ապահովենք նրանց մասնակցությունը: Երեխաները և պատանիները ստեղծագործող քաղաքացիներ են և ընդունակ են մեծերին օգնել՝ բոլորի համար ավելի լավ ապագա կառուցելու գործում: Մենք՝ մեծերս պետք է հարգենք նրանց կարծիք հայտնելու իրավունքը և իրենց կյանքին վերաբերող բոլոր հարցերի լուծմանը մասնակցելու իրավունքը՝ ելնելով նրանց տարիքից և հասունության մակարդակից:

Ասվածը հանգեցնում է նրան, որ պետք է հաղթահարվեն երեխաների իրավունքներին վերաբերող փաստաթղթերը և դառնան գործ:

ՀՀ Սահմանադրության 36-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ընտանիքը, մայրությունը և մանկությունը գտնվում են հասարակության և պետության

պաշտպանության և հովանավորության ներքո: Պետությունը երաշխավորում է երեխաների իրավունքների պաշտպանությունը և ելնում է ընտանիքի ամրապնդման, ընտանիքի բոլոր անդամների փոխադարձ օգնության և պատասխանատվության, ընտանիքում երեխայի դաստիարակության առաջնայնության, ընտանիքի անդամների կողմից իրենց իրավունքների անարգել իրականացումն ապահովելու, այդ իրավունքների դատական պաշտպանության հնարավորության անհրաժեշտությունից:

Երեխաների իրավունքների մասին մասին ՄԱԿ-ի կոնվեցիան Հայաստանը վավերացրել է 1992թ.-ի հունիսի 1-ին: Այն մեծ դեր է խաղացել և շարունակում է խաղալ կրթության գործընթացի հումանացման գործում: Կոնվեցիան, ի տարբերություն երեխաների իրավունքների նախկին փաստաթղթերի, իրավականորեն պարտավորեցնող գործիք է և ստորագրող երկրների կառավարություններին պարտավորեցնում է կարևորել երեխաների հիմնահարցերը: Այն ընդգծում է, որ մանկությունն անպաշտպան է և մեծերի օգնության ու աջակցության կարիք ունի, ուստի ավագները պատասխանատու են երեխաների ճակատագրի համար, և կոչ է անում հաշվի առնել, որ մարդու զարգացումն ու կայացումը տեղի են ունենում հենց մանկության տարիներին:

Կոնվեցիայում շարադրվում են նաև հատուկ կարիք ունեցող երեխաների իրավունքները, մեծ տեղ է տրվում դպրոցական կարգապահությանը՝ որպես երեխաների անվտանգության երաշխիք:

ՀՀ-ում «Երեխաների իրավունքների մասին» օրենքն ընդունվել է 1996թ. մայիսի 21-ին: Օրենքը մի կողմից սահմանում է երեխայի իրավունքները, մյուս կողմից ամրագրում է պետության, համապատասխան մարմինների, քաղաքացիների պարտականությունները երեխաների իրավունքների ուազատությունների պաշտպանության բնագավառում:

Մասնավորապես օրենքն ամրագրում է երեխայի կյանքի, անվան և քաղաքացիության, առողջության պահպանման, անհրաժեշտ կենսապայմաններ ունենալու, բռնությունիցերեխաների պաշտպանության, երեխաների մտքի, խղճի ազատության, կրթության, ընտանիքում ապրելու, ընտանիքում երեխաների իրավունքները պաշտպանելու, բնակության տարածության, ժառանգություն ստանալու, մշակութային արժեքներին հաղորդակցվելու, աշխատանքի, հանգստի, միավորումներին անդամակցելու, անվտանգության ապահովման, պատվի և արժանապատվության պաշտպանության և այլ իրավունքներ: Այսպիսով, օրենքը

կյանքի բոլոր ոլորտներում երեխայի շահերի պաշտպանությանն ուղղված օրենսդրական նորմ է, որտեղ երեխան իրավունքի ինքնուրույն սուբյեկտ է, և, քանի որ, ի տարբերություն մեծերի, հատուկ պաշտպանության կարիք ունի, ուստի պետությունը ոչ միայն սահմանում է հատուկ իրավունքներ, այլ տալիս է դրանց իրականացման համար հատուկ երաշխիքներ:

1. 2 ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՀՀ-ում գործում է երեխաների իրավունքների պաշտպանության եռաստիճան համակարգ՝ ազգային, մարզային և համայնքային մակարդակներով:

Երեխաների իրավունքների պաշտպանության հանձնաժողովը խորհրդակցական մարմին է, որի նպատակն է նպաստել երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության միասնական պետական քաղաքականության ապահովմանը:

Ազգային հանձնաժողովի առջև առաջադրված խնդիրներն են.

• աջակցել երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտի պատասխանատու մարմինների գործունեության համակարգը.

• աշակցել երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությանն ուղղված պետական քաղաքականության ու ռազմավարական ծրագրերի իրականացման և մշտակման ապահովմանը.

• վերլուծել երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության ընթացքում ծագած խնդիրները և մշակել դրանց լուծմանն ուղղված առաջարկություններ.

• աջակցել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների հիմնախնդիրների լուծմանը.

• աջակցել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող պետական, համայնքային և մասնավոր հաստատությունների, հասարակական, քաղաքական, գիտական և այլ կազմակերպությունների համագործակցությանը:

Մարզային մակարդակում գործում են ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինները (Երևան քաղաքում՝ քաղաքապետարանում), որոնց խնդիրներն ուղղված են.

• ապահովել ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանությանն ուղղված պետական քաղաքականության իրականացումը մարզում.

• աջակցել ընտանիքում ապրելու ու դաստիարակվելու երեխայի իրավունքի ապահովմանը.

• ապահովել կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների իրավունքների պաշտպանությունը և կանխարգելել նման իրավիճակում նրանց հայտնվելը.

• մշակել ընտանիքի, կանանց և երեխաների սոցիալական պաշտպանությանն ուղղված պետական նպատակային ծրագրեր և ապահովել դրանց կատարումը.

• մշակել հակասոցիալական վարք դրսևորած և իրավախախտ անչափահասների համար այլընտրանքային /վերականգնողական/ արդարադատության ծրագրեր և ապահովել դրանց կատարումը:

Համայնքային մակարդակում գործում են խնամակալության և հոգաբարձության մարմինները, որոնք ղեկավարում են համայնքապետերը, իսկ Երևանում՝ լիազորությունները քաղաքապետի անունից իրականացնում են Երևանի վարչական շրջանների ղեկավարները: Խնամակալության և հոգաբարձության մարմինների առջև դրված խնդիրներն են.

• երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության ապահովումը.

• երեխայի՝ ընտանիքում ապրելու ու դաստիարակվելու իրավունքի ապահովումը.

• կյանքի դժվար իրավիճակում գտնվող երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության ապահովումը, այդ թվում՝ նրանց հրատապ օգնության, անհրաժեշտության դեպքում նաև անհապաղ տեղավորման ապահովումը, ինչպես նաև ՀՀ օրենքով նախատեսված այլ խնդիրներ:

Այսպիսով՝ ներպետական կազմակերպա-կառավարչական մակարդակներից յուրաքանչյուրը կոչված է ապահովելու այն հիմնական եղանակներն ու միջոցները, որոնք միտված են երեխայի արժանապատիվ գոյությանը:

Այնուամենայնիվ, չնայած երեխաների իրավական կարգավիճակի ամրապնդմանն ուղղված բազմաթիվ դրույթների ամրագրմանն իրավունքի տարբեր և ՀՀ-ում առկա երեխաների պաշտպանությամբ ու իրավունքների ապահովմամբ զբաղվող ենթակառուցվածքների գոյությանը, մենք շարունակում ենք բախվել երեխաների իրավունքների խախտումների մասին վկայող բազմաթիվ փաստերի հետ: Բացակայում է իրապես մարդասիրական, համաչափ և կշռադատված մոտեցումը,

որը կվկայի մեր հանրապետությունում երեխաների նկատմամբ լիարժեք հոգատարության, կյանքի և առողջության պաշտպանության, անձեռնմխելիության և այլ իրավունքների պաշտպանության մասին:

Այսօր ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգում գործում է երեխաների շուրջօրյա խնամքի թվով 6 հաստատություն/մանկատուն/ 3 ընդհանուր տիպի մանկատուն և 3 մասնագիտացված մանկատուն, որտեղ խնամվում է շուրջ 731 երեխա, այդ թվում՝ 506-ը՝ մասնագիտացված մանկատներում:

Նախարարության համակարգում գործում է երեխաների խնամքի և պաշտպանության 8 գիշերօթիկ հաստատություն, որոնք իրականացնում են ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված սոցիալապես անապահով ընտանիքների 6-18 տարեկան երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններում խնամվում են սոցիալապես ընտանիքների շուրջ 750 երեխա :

Վերոնշվածները վկայում է այն մասին, որ պետությունը երեխաների խնամքի նման հաստատությունների ստեղծմամբ միջոցներ է ձեռնարկում երեխաների սոցիալական խնդիրների լուծման համար, սակայն երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի ապահովման և շուրջօրյա հաստատություններ երեխաների հոսքի կանխարգելման նպատակով ոչ պակաս կարևորություն է ներկայացնում երեխայի շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններից երեխաների բեռնաթափման և դեպի այդ հաստատություններ երեխաների հոսքի կանխարգելման գործընթացը:

Պատճառն այն է, որ մանկատան միջավայրը բացասաբար է անդրադառնում երեխայի բարոյահոգեբանական և զգացմունքային վիճակի ու նրանց սոցիալականացման գործընթացի վրա: Այս առումով ցանկալի կլիներ, գործեր այլընտրանքային սոցիալական ծրագրեր, որոնցից օգտվելով ընտանիքը, կկարողանար կայունացնել ֆինանսական վիճակը, և երեխաներին կընձեռվեր ընտանեկան միջավայրում ապրելու և դաստիարակվելու հնարավորություն: Չի կարելի բավարար համարել նաև երեխաների շահերի պաշտպանության մակարդակը քրեաիրավական ոլորտում: Ֆիզիկական և սեռական բռնությունը, մուրացկանությունը, թափառաշրջիկությունը, ալկոհոլի, թմրանյութերի օգտագործումը, մանկական պոռնոգրաֆիան անցանկալի, խայտառակ հակասոցիալական երևույթներ են, ցավոք ունեն լատենտայնության/թաքնվածության/ բարձր մակարդակ, տուժածներն էլ անչափահասներն են, որոնք կամ չեն գիտակցում

իրենց նկատմամբ գործողությունների հանցավոր բնույթն ու չեն բարձրաձայնում դրա մասին, կամ իրենք կամ իրենց ծնողները կամ օրինական ներկայացուցիչները շահագրգռված են, որպեսզի չբացահայտվեն նման դեպքերը: Դրանց դեմ պայքարը պահանջում է ծայրահեղ զգոնություն և օպերատիվություն:

Նախադպրոցական հաստատություններում երեխաների իրավունքներն իրականացնելիս պետք է գիտակցել, որ մանկությունը երեխայի կյանքն է և ոչ թե կյանքին նախապատրաստելու ժամանկաշրջան:

21-րդ դարն անընդնմեջ խնդիրներ է դնում մարդկության առջև, Ա. Թոփուզյանի գնահատմամբ դրանցից կարևորագույնը երեխաների համար աշխարհ կառուցելու խնդիրն է, այսինքն՝ երեխաների իրավունքների պաշտպանությունը նոր իմաստ է ստանում, ուստի անհրաժեշտ է հստակեցնել և զարգացնել այդ բնագավառի իարվական դաշտը:

Այսպիսով, երեխաների իրավունքների ու ազատությունների ճանաչումն ու պաշտպանությունը մշտապես կան ու մնում են դաստիարակությունը հումանացնելո գլխավոր սկզբունքներից մեկը:

Պաշտպանված, հարգված, արժանապատվությունընկարևորված, արդարությունը ճաշակած, լսելի եղած երեխան երկրի առաջընթացիգրավականն է:

Երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտմ ուղենիշային դեր ունի «ՀՀում երեխաների իրավունքների պաշտպանության 2017-2021թթ. Ռազմավարական ծրագիրը», որի շրջանակներում կարևորվում է երեխաների իրավունքների պաշտպանության ապահովումը, երեխաների որակյալ ծառայություններ մատուցելը, նրանց իրենց վերաբերող հարցերի քննարկմանը մասնակից դարձները:

Սակայն, երեխաների իրավունքների ու ազատությունների, օրինական շահերի պաշտպանության բնագավառում առկա են չհստակեցված խնդիրներ և բազմաթիվ բացթողումներ.

- ՀՀ օրենսդրության մեջ կան դրույթներ, որոնք չեն բխում երկրի սոցիալտնտեսական պայմաններից՝ խոչընդոտելով երեխաների իրավունքների լիակատար իրացմանը:

- Շարունակվում են ալկոհոլի, ծխախոտի գովազդները, մարդկային արժանապատվությունը նվաստացնող, բռնությունը, անբարոյականությունը քարոզող տեղեկատվության տարածումը:

• Առաջնային է մնում երեխաների կրթության որակի մատչելիության և հավասար հնարավորություններ ապահովելու խնդիրը:

• Դեռ ցածր են երեխաների իրավունքների ու ազատությունների, օրիանական շահերի վերաբերյալ ծնողների, մանկավարժների գիտելիքների մակարդակն ու պատրաստվածությունը:

• ՀՀ-ում երեխաները շարունակվում են դիտարկվել մեծահասակների կցորդ և մասնակից չեն իրենց կյանքին վերաբերող հարցերի քննարկմանը և լուծմանը:

Երեխան պետք է հետաքրքրություն դրսևորելու, հարցեր տալու և պատասխաններ ստանալու, ինքն իրեն ստուգելու և սխալներ գործելու, իմանալու և չիմանալու, ստեղծագործելու և անմիջական լինելու, հարգվելու իրավունք ունենա:

• Իրավական որոշ բացեր են առկա երեխաների առողջապահական, քաղաքական, սոցիալական պաշտպանության իրավունքների իրացման ոլորտներում և այլն:

Խնդիրները, բացթողումները մասնակիորեն պակասեցնելու համար առաջարկում ենք մշակել երեխայի հետ առնչվող մասնագիտական հաստատությունների աշխատակիցների՝ հատուկ մասնագիտական և հոգեբանական գիտելիքների տիրապետման և համապատասխան պատրաստվածության ապահովման համար չափորոշիչներ, դասընթացներ:

Իսկ երեխաների իրավունքների պաշտպանության ներպետական մեխանիզմն առավել արդյունավետ դարձնելու համար առաջարկում ենք ստեղծել երեխաների իրավունքների պաշտպանի ինստիտուտ՝ հիմնված ինքնավարության, անկախության, անկողմնակալության, թափանցիկության արդարության, պրոֆեսիոնալիզմի և բազմակարծության սկզբունքների վրա:

ԳԼՈՒԽ 2

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍ

Խումը՝ ավագ խումբ

Թեման- «Փոքր երեխաների մեծ իրավունքները»

Տեսակը- թեմատիկ պարապմունք

Նպատակը՝

1. Ձևավորել պատկերացումներ սեփական իրավունքների մասին
2. Նպաստել իմացական կարողությունների զարգացմանը
3. Զարգացնել քննադատական մտածողությունը

Խնդիրները՝

1. Սովորեցնել սեփական իրավունքները
2. Սովորեցնել պաշտպանել իրավունքները
3. Սովորեցնել գնահատել դիմացիի իրավունքները:

Վերջնարդյունքները՝

1. Հասկանա սեփական իրավունքները
2. Հասկանա սեփական արարքների հետևանքները
3. Համագործակցի հասակակիցների հետ
4. Տարբերակի առողջ և անառողջ սնունդը
5. Հետևի առողջության պահպանման կանոններին
6. Կարողանա միաժամանակ երգի պարելով:

Կարողունակությունները

1. ճանաչողական և մոտիվացիոն,
2. ինքնաճանաչողական և սոցիալական:

Կապը ն/դ չափորոշչիհետ

Ի (բ,գ,ը), ՀՍԱ (բ,գ,դ,ե), ԻԱԱ (գ,ը), Շ (է):

Անհրաժեշտ պարագաներ- տուփ, ծաղիկ իր թերթիկներով, համակարգիչ, պրոեկտոր, տարբեր սյուժետային նկարներ, որոնց մեջ պահպանվում կամ

խախտվում են իրավունքները, գրենական պիտույքներով փազելներ, առողջ սննդի բուրգ, բժշկական գորշիքներ:

Պարապմունքիընթացքում կիրառվել է խիկհամակարգը՝ Խ-մտագրոհ, Ի-հարցուպատասխան, ՏՏ, Կ- քառաբաժան մեթոդ, Գնահատման տեխնիկա- «Լուսացույց», «Գնացք»:

Ընթացքը՝

Ողջունում ենք Ձեզ հյուրեր,

Մեր հրաշք մանկավարժներ,

Տեղավորվեք դուք հարմար,

Օրը կլինի բազմազբաղ:

Թեպետ փոքր ենք մենք շատ դեռ,

Բայց դե ունենք իրավունքներ,

Հավասար են դրանք միշտ,

Եթե օգտվենք իրավունքնրից ճիշտ:

Դաստիարակ- երեխաներ, դոք գիտեք, որ ես այսօր շատ տխուր եմ եկել մանկապարտեզ:

Երեխաներ- Ինչու, ինչ է պատահել:

Դաստիարակ- ես երեկ ամբողջ օրը, Ձեզ համար պատրաստեցի մի գեղեցիկ ծաղիկ, որն ինձ ու Ձեզ այսօր շատ անհրաժեշտ էր, բայց առավոտյան արթնացա ու տեսա, որ չարաճճի Էլենն ու Իռենը պոկել են մեր ծաղկի թերթիկները ու վախենալով, որ ես կբարկանամ ինձ չեն ասել: Շատ եմ տխրել, ես շատ ժամանակ էի հատկացրել դրա ստեղծման համար, ընթերցել էի տարբեր գրքեր, որ կարողանայի ծաղիկը պատրաստել: Բայց ես մի բան եմ որոշել երեխաներ, դուք ինձ կարող եք օգնել, որպեսզի մենք փակցնենք ծաղկի թերթիկները: Ասեմ, որ ծաղիկը սովորական ծաղիկ չէր, նրա յուրաքանչյուր թերթիկ ուներ իր տեղը և նշանակությունը: Ես ինձ հետ բերել եմ նաև մի տուփ, որտեղ թաքնված է հուշումը, թե ինչպես մենք պետք է այն հավաքենք:

Դաստիարակը խնդրում է երեխաներին գուշակել, թե ինչ կարող է լինել տուփի մեջ, կապելով առարկան շաբաթվա ընթացքում քննարկված թեմաների հետ: Ապա բացում է տուփը և հանելով երեխաների իրավունքների մասին հիշատակվող կոնվենցիայի գիրքը, հարցադրումներ է ուղղում դեպի երեխաները.

-Ապա ուշադիր եկեք նայենք, թե ինչպիսի գիրք է:

-Ուշադիր նայեք կազմին, ինչ կարող ենք ասել. Այն ինչի մասին է:

-Եկեք թերթենք էջերը, այնտեղ նույնպես երեխաների նկարներ են, ուրեմն ինչ եզրահանգման եկանք, գիրքը ում մասին է:

Երեխաներից հնչում են ակնկալվող պատասխանները:

Երեխաներ մենք այսօր ևս մեկ անգամ կխոսենք Ձեր իրավունքների մասին, չմոռանալով, որ դուք ունեք նաև պարտականություններ:

Դաստիարակը մի փոքր խոսում է գրքի մասին, երեխաներին պատմում է, որ իրավունքներըը դրանք այն են, ինչ երեխաները պետք է անեն, կամ այն է, երբ ուրիշները պետք է անեն երեխաների համար:

1. ***Երեխայի կյանքի, անվան, ազգանվան իրավունք***

Հնչում է նորածնի լացի ձայն:

Դաստիարակ- երեխաներ, երբ մայրիկը և հայրիկը սիրում են միմյանց, ծնվում են երեխաները: Երբ փոքրիկը հայտնվում է ընտանիքում, նրան անմիջապես տալիս են անուն և ազգանուն: Ապա հանում է տուփից երեխաներից մի քանիսի նկարները, և անվանում են երեխաներին անուններով և ազգանուններով: Երեխաների ամենակարևոր և ամենաառաջին իրավունքը, դա կյանքի, անուն, ազգանուն ունենալու իրավունքն է: Երեխաներից որևէ մեկը գալիս է, սեղանի վրայից գտնում է կյանքի իրավունքի թերթիկը և փակցնում է այն ծաղկին:

2. ***Երեխայի ընտանիքում ապրելու իրավունք***

Դաստիարակը երեխաների ուշադրությունը հրավիրում է պատի վրա գցված էկրանին: Դիտում են երեխաների ընտանեկան լուսանկարները:

Դաստիարակ- Երեխաներ, դուք ինչ տեսաք: Ինչ տրամադրություն ունեիք ձեր լուսանկարներում: Որտեղ էիք գտնվում: Նայելուց հետո ինչի մասին հիշեցիք:

Երեխաներ-ակնկալվող պատասխաններ:

Դաստիարակ- Այո ձեզանից յուրաքանչյուրն իրավունք ունի ապրելու ընտանիքում, մայրիկի, հայրիկի հետ միասին: Նույնիսկ ես գիտեմ, որ ձեզանից շատերն ապրում են մեծ ընտանիքներում տատիկների և պապիկների հետ միասին, որը շատ ողջունելի է: այստեղից կարելի կատարել եզրակացություն, որ երկրորդ և կարևոր իրավունքը, դա երեխայի ընտանիքում ապրելու իրավունքն է: Երեխաներից մեկը փակցնում է այդ թերթիկը:

3. Երեխայի հանգստի, ժամանցի իրավունք

Դաստիարակ- երեխաներ, ցանկանում եք մի փոքր հանգստանալ. երգել, պարել: Դե եկեք մոտենանք խմբասենյակի մյուս կողմը և երգենք մեր սիրելի ոզնուկի մասին:

Երեխաներից մեկը դառնում է ոզնի, իսկ մյուսները երգում են նրա մասին, ոզնուն սովորացնելով ծափ տալ, թռչկոտել, վազվզել, դոփել:

Վերադառնալով սեղանների մոտ դաստիարակը հարցադրումների միջոցով բերում է երեխաներին այն եզրահանգման, որ երեխաներն ունեն հանգստի, ժամանցի իրավուն: Երեխաներից մեկը փակցնում է ծաղկիր այդ թերթիկը:

4. Երեխայի առողջության պահպանման իրավունք

Պատահական դուռը թակում են և երեխաներին հյուր է գալիս մանկապարտեզի բժիշկուհի ընկեր Հեղինեն:

Դաստիարակ- երեխաներ ապա նայեք ով է եկել մեզ հյուր: Ինչ էլ գիտեյիք, որ մենք Ձեզ սպասում էինք: Ընկեր Հեղինե, քանի որ հանրապետությունքվ մեկ տարածված են սուր շնչառական վարակները, նույնիսկ կարմրուկ է տարածված, մեր երեխաները խնդրում են, որ իրենց զննեք:

Բժշկուհի- Դե լավ, ժամանակ չունեմ, ես այնքան գործ ունեմ, դեռ մատյանս չեմ լրացրել, պետք է աշխատեմ, չեմ կարող ստուգել:

Դաստիարակ- երեխաներ, այսպես հնարավոր է, ճիշտ է վարվում ընկեև Հեղինեն:

Երեխաներ- Ոչ, դուք բժիշկ եք, դուք պարտավոր եք մեզ ստուգել, բուժել:

Դաստիարակ- երեխաներ ինչ կարող ենք ասել, այս պարագայում որ իրավունքն է գործում:

Երեխաներ- առողջության պահպանման իրավունքը:

Դաստիարակ- այո, կեցցեք:

Բժշկուհի- ինչքան էլ օլավ եոք տիրապետում ձեր իրավունքներին: Կեցցեք դուք, ես ձեր աչքերից զգում եմ, որ դուք շատ առողջ եք: Եվ դրա համար ձեզ պարգևատրում ունեմ: Բժշկուհին իր պայուսակից հանում է վիտամիններով հարուստ մրգեր և բանջարեղեն, և հիշեցնում է, որ պետք է սնվեն առողջ, շատ զբաղվեն սպորտով: Երեխաներից մեկը փակցնում է առողջության պահպանման իրավունքի թերթիկը:

5. ***Երեխայի առողջ սննդի իրավունք***

Դաստիարակը վարում է ճանաչողական զրույց այն մասին, թե ինչքան կարևոր է, որ երեխաները սնվեն առողջ սննդով: Ոչ մեկ իրավունք չունի նրանց առաջարկելու անառողջ, վատ, հին սնունդ: Ապա երեխաներից երկուսին խնդրում է կառուցել առողջ սննդի բուրգը: հարցերի միջոցով եզրահանգում են, որ երեխաներն ունեն առողջ սննդի իրավուն և երեխաներից մեկը գտնելով այդ թերթիկը փակցնում է այն ծաղկին:

6. ***Երեխայի կրթության իրավունք***

Դաստիարակը երեխաների ուշադրությունը հրավիրում է սեղանների վրա դրված փազելի կտորների վրա և խնդում է հավաքել փազելն՝ ամբողջացնելով պատկերը: Սեղանների վրա գտնում են մատիտների, գրքերի, պայուսակի, գրչատուփի, ինչպես նաև դպրոցի նկարներ:

Դաստիարակ- երեխաներ ապա նայեք ձեր հավաքած փազելներին, ինչ պատկերներ եք տեսնում: ինչ եզրակացություն կարող ենք անել, այստեղ երեխայի որ իրավունքի մասին է խոսքը:

Երեխաներ- ակնկալվող պատասխան:

Երեխաներից մեկը փակցնում է ծաղկի նախավերջին թերթիկը:

7. ***Երեխայի բռնությունից պաշտպանվելու իրավունք***

Դաստիարակը երեխաների ուշադրությունը հրավիրում է տեսահոլովակի վրա, որտեղ պատկերված են բռնության տեսարաններ:

Դաստիարակ- երեխաներ դուք ինչ տեսաք, ձեզ դուր եկավ այս ամենը, մի փոքր տխրեցիք չէ:

Երեխաներ- ակնկալվող պատասխաններ:

Դաստիարակը հիշեցնում է, որ ոչ ոք իրավունք չունի երեխաներին ենթարկելու բռնության: Երեխաներից մեկը փակցնում է ծաղկի վերջին թերթիկը և անվանում ծաղկին «Իրավունքի ծաղիկ»:

Խաղ՝ «Որտեղ են խախտվում իրավունքները և որտեղ են պահպանվում»:

Կշռադատման փուլում պարապմունք ամփոփվում է քառաբաժան մեթոդով: Գրատախտակին փակցվում է մեթոդի պաստառը և երեխաները պատասխանելով հարցերին, տեսնում են, թե որ սունյակում են շատ շրջաններ փակցրել:

Պարապմունքը գնահատել «Լուսացույց» տեխնիկայի միջոցով:

Վերջում երեխաներին բացատրել, որ պետք է նստեն գնացք և ուղևորվեն իրավունքների քաղաք, խնդրել, որ երեխաներն ընտրեն այն իրավունքի վագոնը, որն իրենց ավելի դուր եկավ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրելով սաների իրավունքների ու ազատությունների, պատվի ու արժանապատվության պատպանությունն հանգել եմ այն եզրահանգման, որ երեխաների մեջ իրենց իրավունքների և ազատությունների մասին տարրական պատկերացումներ ձևավորելու, այլ մարդկանց և նրանց իրավունքների նկատմամբ հարգանքն ու հանդուրժողականությունը զարգացնելու համար կարևոր է ոչ միայն գիտելիքներ տալը, այլև պայմաններ ստեղծել դրանց գործնական կիրառման համար: Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան հստակ սահմանում է, որ յուրաքանչյուր երեխա ունի կյանքի իրավունք, անուն, քաղաքացիություն, ընտանիք ում ապրելու և դաստիարակվելու, ծնողներին ճանաչելու իրավունք: Խնամքից և ուշադրությունից զրկված երեխան չունի նորմալ աճի և առողջ զարգացման երկրորդ հնարավորություն, ուստի պետք է առաջնահերթ ուշադրություն դարձնել բոլոր մակարդակներում երեխաների պաշտպանության խնդրին: Կատարելով հետազոտություն նկատեցի, որ ծնողների մեծամասնությունը չի ուսումնասիրել երեխայի պաշտպանությանը վերաբեղ ոչ մի նյութ, շատ քչերն են հետաքրքված դրանով: Սաների պաշտպանության վրաբերյալ շխատանքը պետք է կատարել սիստմատիկ, աստիճանաբար հասնելով այմ բանին, որ բոլորը անկախ մասնագիտությունից տեեղյակ լինեն այս ամենի մասին: Մեր մանկապարտեզի մանկավարժները ակտիվ մասնակցելով քննարկմանը վեր հանեցին այս թեմայի կարևորությունը, նշելով, որ այն մեզ համար առաջնային տեղ է զբաղեցնում: Սա կրելու է շարունական բնույթ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ օրենքը Երեխայի իրավունքների մասին, 29.05.1996:

2. <<Եկենք սովորենք երեխայի իրավունքները>>, ուղեցույց ուսուցիչների համար, Երևան 2021,

ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ:

3. <<Երեխայի իրավունքների իրավիճակի վերլուծություն. Հայաստան>>, Երևան 2015, Save the Children:

4. <<Հետաքրքրաշարժ խաղ-գրքույկ>> , յուրաքանչյուր երեխայի համար, Երևան, ՅՈՒՆԻՍԵՖ:

5. <<Կոնվեցիա երեխայի իրավունքների մասին>>, ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեա: http://parliament.am/library/MAKkonvencianer/10.pdf :

6. https://children.ombuds